



# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Անգլերենի ուսուցման այլընտրանքային  
մեթոդներ  
Հետազոտող ուսուցիչ՝ Վերգինե Խոստիկյան  
Դպրոց՝ Արմավիրի հ.3 հիմնական դպրոց  
Մենթոր՝ Անի Իսկանդարյան

ԱՐՄԱՎԻՐ 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
ԳԼՈՒԽ 1. Անգլերենի ուսուցման այլընտրանքային մեթոդներ.....	5

ԳԼՈՒԽ 2. Խաղի տեսակները օտար լեզվի ուսուցման ժամանակ.....	11
Եզրակացություն.....	14
Օգտագործված գրականության ցանկ.....	16

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օտար լեզուների դասավանդման գործընթացում կարևորվում են ուսուցման ժամանակակից, այլընտրանքային մեթոդներն ու գործընթացները, որոնք ոչ միայն ձևավորում և զարգացնում են սովորողների լեզվական, հաղորդակցական կարողությունները, այլև կյանքի կոմպետենցիաները՝ քննական մտածողությունը, ստեղծագործ մտածողությունը, հավասարակիցների հետ համագործակցելու/ փոխգործակցելու կարողությունները, սովորել սովորելը,

ինչպես նաև ուսումնառության գործընթացում առկա դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու կարողությունները:

Մեթոդների մոտեցման շրջանակներում լեզվակրթության գլխավոր խնդիրներից մեկը լեզվի և մշակույթի ոլորտում նոր փորձառության շնորհիվ սովորողի անձի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է: Հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները՝ այսօր խնդիր է դրվում բարձրացնել անհատի փորձն ու հմտությունները օտար լեզուն միջմշակութային հաղորդակցության մեջ կիրառելու նպատակով, որն էլ երաշխավորում է հաջողակ հաղորդակցություն:

Օտար լեզուների ուսուցման մեթոդաբանության պատմությունը գիտի օտար լեզուների ուսուցման առավել ռացիոնալ մեթոդ գտնելու բազմաթիվ ու բազմազան փորձեր: Ամենահինը բնական մեթոդն էր, որը ոչնչով չէր տարբերվում այն մեթոդից, որով երեխան սովորեցնում է իր մայրենի լեզուն: Օտար լեզուն տիրապետում էր պատրաստի նմուշների ընդօրինակմանը, ուսումնասիրվածի հետ անալոգիայով նոր նյութի կրկնվող և վերարտադրմանը: Բնական մեթոդը, որը հետապնդում էր զուտ գործնական նպատակներ՝ ուսուցում, առաջին հերթին՝ հեշտ տեքստ խոսելու և կարդալու ունակություն, երկար ժամանակ բավարարում էր հասարակության կարիքները, որտեղ օտար լեզվի արդյունավետ իմացությունը նրա արտոնությունն էր: Վերին շերտերը: Յուրաքանչյուր մեթոդ ունի որոշակի պայմաններում օբյեկտիվ արժեք:

Օտար լեզուների ուսուցման մեթոդաբանության պատմության իմացությունը կօգնի սկսնակ ուսուցչին ավելի ազատ կողմնորոշվել դասավանդման մեթոդների ընտրության հարցում, դրանք ռացիոնալ կերպով համատեղել իրենց աշխատանքում և գիտակցաբար և ստեղծագործաբար կիրառել դրանք իրենց աշխատանքում:

21-րդ դարում անգլերեն լեզվի ուսուցման և ուսումնառության հետ կապված խնդիրները շոշափում են առանց բացառության բոլոր բնագավառներում մասնագիտացող սովորողների կենսական շահերը:

Ուստի այս լեզվի դասավանդման արդի մեթոդիկան պետք է ի գործը լինի ժամանակին արձագանքել նոր մարտահրավերներին: Մասնավորապես՝ օրեցօր աճող հեռահաղորդակցական միջոցներից օգտվելու պահանջները պարտադրում են մասնագետներին վերանայել օտար լեզուների ուսուցման թե՛ մոտեցումները, թե՛ սկզբունքները, թե՛ նպատակն ու խնդիրները:

Սկզբունքային նշանակություն ունի հատկապես օտար լեզուների մասնագիտական կողմնորոշման ուսուցման նպատակների վերանայումը, քանի որ արդի փուլում խնդիր է դրվում սովորողին ձևավորել որպես, այսպես կոչված «երկրորդային լեզվակիր», որը նրան հնարավորություն է ընձեռում դառնալ միջմշակութային հաղորդակցության ակտիվ մասնակից:

Անգլերենի դասավանդման բոլոր մասնագետները և մասնագիտացողները քաջ գիտակցում են, որ այդ բնագավառում անհրաժեշտ է մշակել արդիական հայեցակարգեր, որոնք խթան կհանդիսանան ինչպես ուսումնական նոր ծրագրերի ստեղծման, այնպես էլ կիրառվող մեթոդների, սկզբունքների, միջոցների և ձևերի վերաարժեքավորման ու դրանց նոր տարբերակների մշակման համար:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ անգլերենի ուսուցումը մեզանում կազմակերպվում է հաղորդակցման բնական միջավայրի բացակայության պայմաններում, և հեռահաղորդակցական ժամանակակից միջոցներն ինչ-որ չափով լրացնում են այդ բացը:

## **ԳԼՈՒԽ 1. ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՅԼԸՆՏՐՈՒՆԹԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐ**

Լեզվի դասավանդման պատմության ընթացքում դասավանդողները կիրառել են տարբեր մեթոդներ, պարբերաբար անցում կատարել նորագույն մեթոդների, իսկ ժամանակն ու նոր սերունդների պահանջները հղկել են բառապաշարի և լեզվական կանոնների մատուցման ձևերը՝ դրանք զուգադրելով ժամանակակից տեխնիկայի և սարքավորումների առաջարկած հնարավորությունների հետ<sup>1</sup>:

Նորովի մատուցելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու ձգտումը լեզուն ուսուցանողներին դրդել է նոր սկզբունքներ և մարտավարություններ մշակել, որոնցից հաջողվածները լայն տարածում և կիրառություն են գտել, լրացվել, վերամշակվել և վերածվել մեթոդների:

Մ. Դորշը տարբերակում է լեզվի ձեռքբերում և լեզվի սովորում հասկացությունները: Նա կարծում է, որ լեզվի ձեռքբերումը չգիտակցված գործընթաց է, որի հիմքում անգիր արված բառերն ու արտահայտություններն են, լսողական և տեսողական ընկալումը, ինչպես մայրենի լեզվի դեպքում է: Լեզվի սովորումը ենթադրում է յուրաքանչյուր բառի, արտահայտության, մտքի և խոսքի գիտակցված սովորում, կառուցում և շարադրում:

<sup>1</sup>Полат Е.С., Метод проектов на уроках иностранного языка // Иностр. языки в школе, 2000, էջ` 16:

Լեզուն սովորողը ուսուցումը սկսում է լեզվական կանոնների և բառապաշարի յուրացումից, դրանք դնում գործածության մեջ՝ որոշակի արդյունքի հասնելու համար: Սակայն, կարծում ենք, լեզվի ձեռքբերումն ու լեզվի սովորումը փոխկապակցված գործընթացներ են:

Ուսուցման որոշակի փուլերում կամ ողջ ընթացքում սովորողի հիշողության մեջ պատկերվում և պահպանվում են բառակապակցություններ, արտահայտություններ և լեզվական կառույցներ, որոնք լեզվական կանոններից «դուրս են», չեն համապատասխանում գրական լեզվի քերականական սահմանումներին, սակայն առօրյա խոսակցական լեզվում լայն տարածում ու կենցաղային գործածություն ունեն, ինչի շնորհիվ էլ լեզվագիտագործման այսպիսի ձևերը ինքնաբերաբար տեղ են գտնում օտար լեզու սովորողի բառապաշարում և գիտակցության մեջ:

Բացի այդ, յուրաքանչյուր սովորող լեզվի յուրացման և գործածման որոշակի փուլում նկատում է, որ իր գիտելիքի որոշակի մասը «մեխանիկորեն» է ձեռք բերել: Դասավանդելն ու սովորելը պետք է հավասարապես փոխկապակցված լինեն, միայն այդ դեպքում սովորելը արդյունավետ դասավանդման արդյունք կհամարվի:

Միայն դասավանդողի հետևողականության և սովորողի ջանասիրության դեպքում են լավագույն արդյունքներ գրանցվում: Անշուշտ, չի կարելի հերքել դարերով եկած այն կարծրատիպը, որ նոր լեզու սովորող յուրաքանչյուր անձ բառապաշարի և լեզվական կանոնների մատուցման անհատական մոտեցում է պահանջում, ուստի չի կարող մեկ անձի դեպքում հաջողություն արձանագրած մարտավարությունը համարվել բացարձակ արդյունավետ:

Բացի այդ, կարևորվում են նաև լեզվական ուսուցման նպատակը, ժամկետները, սովորողի ընդունակությունները և այլն:

Սա է պատճառը, որ մանկավարժության մեջ ուսուցման մարտավարությունները բազմաթիվ են, իսկ արդյունավետ դասավանդման մեթոդները մի քանիսը:

Մ. Գ. Սիդիքուլին կարևորում է դասավանդման ոճերի դասակարգումը /teaching styles/, որոնցով էլ պայմանավորված է մեթոդի ընտրությունը՝

1. Կարգապահական ոճ /discipline-centred/, որտեղ կարևորությունը տրվում է մշակված ծրագրից և ժամանակացույցից չշեղվելուն և տվյալ դասընթացի նյութին համապատասխան աշխատելուն: Այս դեպքում նպատակը յուրաքանչյուր դասընթացի պլանավորումն ու դրա ամբողջությամբ իրականացումն է:

2. «Դասախոսակենտրոն» ոճ /instructor-centred/ առանցքային դերում դասավանդողն է, այսինքն դասընթացի վարման հիմնական դերը դասավանդողին է, նա սովորողի հետ աշխատում է նախապես իր կողմից պատրաստած նյութերով՝ թարգմանված բառապաշար, հոմանիշներ, հականիշներ, դրանց գործածությունը արտահայտությունների և նախադասությունների մեջ և այլն:

3. Առանցքային դերում սովորողն է՝ «ուսանողակենտրոն» ոճ /student-centred/, նա է կատարում երկրորդ կետում նշվող բոլոր առաջադրանքները, իսկ դասավանդողը ուղղորդում է և բացատրում նոր նյութը:

Սովորողի կողմից լեզուն առավել արդյունավետ յուրացնելու ոճով է պայմանավորված մեթոդի ընտրությունը<sup>2</sup>:

Ոմանք ավելի լավ են ըմբռնում նյութի հետ շատ և պարբերաբար աշխատելու դեպքում և նախընտրում են «ուսանողակենտրոն» ոճով աշխատել՝ իրենց վրա վերցնելով նյութի հետ աշխատելու ծանրությունը, ոմանք էլ նյութը հեշտությամբ մտապահում են՝ տեսողական հիշողությամբ «որսալով լեզվական նշաններն ու պատկերները» և դասավանդողից պահանջում են տրամադրել միայն մշակված նյութեր:

Ոճերին համարժեք մեթոդ ընտրելիս կարևոր է նաև դասընթացի տեղայնությունը: Եթե ուսուցումը խմբակային, դասարանային կամ լսարանային պայմաններում է, դժվար է պլանավորած նյութին ամբողջությամբ կամ ամենայն մանրամասնությամբ անդրադառնալը, քանի որ յուրաքանչյուր անհատ տարբեր կրթական ունակություններ, հիշողություն և գիտելիքների բազա ունի, բացի այդ պետք է հաշվի առնել նաև նյութի բարդությունը:

Մեկից ավելի սովորողների հետ աշխատելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում մեկ դասաժամի ընթացքում անցում կատարել տարբեր ոճերի, այսինքն՝ աշխատել տարբեր դասավանդման մեթոդների համակցմամբ:

Դասավանդողի համար մեթոդը լեզվական նյութի մատուցման և դասավանդման գործընթացի կազմակերպման, իսկ սովորողի համար՝ մատուցված նյութի առավելագույնս արդյունավետ ընկալման, յուրացման և վերարտադրման ձևն է:

Յուրաքանչյուր մեթոդի կիրառման դեպքում առանցքային կարևորություն ունի ուսուցման ժամանակացույցի մեջ նյութի ճիշտ բաշխումը: Թե՛



<sup>2</sup> Hatch E., Discourse and language education. Cambridge: Cambridge University Press, 1992, էջ՝ 26:

դասավանդողը, թե՛ սովորողը նախապես պետք է համաձայնության գան տվյալ դասընթացից ակնկալվող արդյունքների շուրջ:

Դասավանդողը պետք է տեղեկացնի սովորողին, թե տվյալ ժամանակահատվածում, ինչպիսին կարող է լինել այն առավելագույն արդյունքը, որը հնարավոր է գրանցել, և երկուստեք պետք է փոխադարձաբար հետևողական լինեն գիտելիք տալու և ստանալու հարցում:

Անգլերենի ուսուցման համար լեզվաբանության մեջ առկա մեթոդներից առավել հայտնի և ամենաշատ կիրառվող մեթոդները հետևյալներն են.

1. ակտիվ ուսուցման մեթոդ /active learning method/,
2. երկլեզու մեթոդ /bilingual method/,
3. ուղիղ մեթոդ /direct method/,
4. հաղորդակցական մեթոդ /communicative method/,
5. քերականական-թարգմանական մեթոդ /grammar-translation method/



Ակտիվ ուսուցման մեթոդը համարվում է կարգապահական ոճով դասընթացն անցկացնելու միջոց:

Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ հենց առաջին դասից սովորողի հետ աշխատում են չորս հմտությունները՝ կարդալ, գրել, լսել, խոսել /reading, writing, listening, speaking/ հավասարապես զարգացնելու ուղղությամբ: Այս դեպքում սովորաբար մեկ դասընթացը բաշխում են չորս հավասար ժամաբաժինների՝ յուրաքանչյուրի ընթացքում մեկ հմտության շուրջ աշխատելու համար: Տվյալ դասընթացի համար նախատեսված բառապաշարի և

քերականության շրջանակներում աշխատանք է տարվում չորս հմտությունները զարգացնելու ուղղությամբ:

Սովորաբար այս մեթոդի կիրառումը գործնականում հետևյալ կերպ է արտահայտվում. ընտրվում է համապատասխան քերականական նյութ պարունակող տեքստ, որը սովորողը կարդում է, թարգմանում, դուրս գրում անծանոթ բառերն ու արտահայտությունները, կատարում այնպիսի վարժություններ կամ առաջադրանքներ, որոնք ստուգում են բառապաշարի և քերականության յուրացումը և կատարելագործում դրանք, հետո դասավանդողը օտար լեզվով խոսում է այդ տեքստի շուրջ, մեկնաբանություններ անում և նույնը պահանջում սովորողից: Վերջինս փորձում է հասկանալ խոսքը և խոսելու միջոցով վերարտադրել ստացած գիտելիքները: Այսպիսով, դասընթացի ընթացքում սովորողը և՛ յուրացնում, և՛ կիրառում է նյութը: Հաջորդող դասընթացների ընթացքում հմտությունների շուրջ աշխատելիս դասավանդողը պարբերաբար անդրադառնում է նախորդ դասերի նյութերին, որպեսզի սովորողը լավագույնս մտապահի դրանք:

Հաշվի առնելով ուսումնագիտական ոլորտի և գործատուների պահանջները, կարծում ենք, ակտիվ ուսուցման մեթոդը ամենաարդիականն է, քանի որ մեր օրերում առավել քան կարևորվում է լեզվի ակտիվ՝ տեսական և գործնական իմացությունը:

Երկլեզու մեթոդը նույնպես կարգապահական ոճում կիրառվող մեթոդներից է: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ սովորողը լեզուն սովորում է «թեմատիկ սկզբունքով»՝ կոնկրետ իրավիճակներում ըստ անհրաժեշտության հաղորդակցվելու համար: Կարելի է ասել, այն հիմնականում ենթադրում է բանավոր խոսքի՝ հաղորդակման ուսուցում<sup>3</sup>:

Ուղիղ մեթոդը օտար լեզվի ուսուցումը նույնացնում է մայրենի լեզվի հետ: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ հիմնական շեշտը դրվում է բանավոր հաղորդակցության վրա: Այս դեպքում ամբողջությամբ բացակայում է թարգմանությունը (միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում), բառապաշարը դասավանդվում է նկարներով, պատկերներով, ժեստերով և արտաքին շարժումներով ցուցադրելու և հասկացնելու միջոցով:

Հաղորդակցական մեթոդը, կարելի է ասել, երկլեզու և ուղիղ մեթոդների համադրումն է:

---

<sup>3</sup> Nagaraj G. English Language Teaching: Approaches, Methods, Techniques. India: Orient Blackswan, 1996, էջ՝ 50:



Այստեղ նպատակը հաղորդակցական հմտություններ զարգացնել է, ոչ թե լեզվի կառուցվածքային գիտելիքները: Ինչպես երեխան է լսելով և կրկնելով սկսում խոսել՝ առանց հասկանալու քերականական կառուցվածքի առանձնահատկություններն ու նրբությունները, այնպես էլ սովորողն է հիմնականում առանց նշումների, միայն լսելով և խոսելով յուրացնում լեզուն: Այս մեթոդը երկլեզու մեթոդի հետ շատ ընդհանրություններ և տարբերություններ ունի: Նման է, քանի որ չի արգելում մայրենի լեզվի գործածմամբ ճշտումներ կատարել, անհասկանալին պարզաբանել, սակայն տարբեր է նրանով, որ շեշտը չի դնում քերականական կառուցվածքների ուսուցման վրա՝ պարզաբանելով, որ դրանք, ուսուցման որոշակի փուլում, ինքնստիկսյան հասկանալի կդառնան սովորողի համար: Ուղիղ մեթոդի հետ նույնպես ընդհանրություններ կան: Հաղորդակցական մեթոդը շեշտը դնում է հենց հաղորդակցման վրա, նվազագույնի է հասցնում քերականական բացատրությունները և մայրենի լեզվի կիրառումը, սակայն չի արգելում դրանք:

## ԳԼՈՒԽ 2. ԽԱՂԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՕՏԱՐ ԼԵՉԿԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Երեխաների ոգևորությունը անասելի մեծ է ուսուցման ընթացքում: Նրանք հետաքրքրվում են այն ամենով, ինչ շրջապատում է իրենց, և այս դրական վերաբերմունքը օտար լեզու ձեռք բերելու նկատմամբ պետք է գովաբանել: Բացի սովորելու նկատմամբ հետաքրքրությունից, երեխաները կարող են հասկանալ և անել շատ ավելին, քան մեծահասակները: Քանի որ նրանք շատ բաներ սովորում են տեսնելու, զգալու և շոշափելու միջոցով, ուստի նրանց համար լավագույն ուսուցման միջոց է խաղը: Ըստ Ջիլ Հեդֆիլդի խաղը կանոններով զբաղմունք է, նպատակ և զվարճանքի տարր/ մաս/: Նա նաև ասում էր, որ կան երկու տեսակի խաղեր՝ մրցակցային և համագործակցային խաղեր: Մրցակցային խաղերը խաղեր են, որոնցում խաղացողը կամ թիմերը մրցում են առաջինը հասնելու նպատակին: Իսկ համագործակցային խաղերը խաղեր են, որոնցում խաղացողները կամ թիմերը միասին աշխատում են ընդհանուր նպատակին հասնելու համար: Չենը նաև իր օրագրում ասել է, որ խաղերի օգտագործման առավելությունները օտար լեզվի ուսուցման մեջ հետևյալն են.

-խթանել հաղորդակցային կարողունակությունը,

- ստեղծել իմաստալից համատեքստ լեզվի օգտագործման համար,
- բարձրացնել սովորելու մոտիվացիան,
- նվազեցնել սովորելու անհանգստությունը, -
- խրախուսել լեզվի ստեղծագործ և ինքնաբերական օգտագործումը
- կառուցել համագործակցային ուսումնական միջավայր:

Խաղերը նաև ուսուցման մեջ խոսելու հմտությունները զարգացնելու համար լավագույն մեթոդներից են: Դրանք նպատակ ունեն համարվելու որպես լավ հաղորդակցական գործողություններ: Սովորողների համար նախատեսված բոլոր լեզվական խաղերի նպատակը լեզուն օգտագործելն է: Այնուամենայնիվ, խաղի ընթացքում սովորողները նաև օգտագործում են թիրախային լեզուն՝ ցանկալի նպատակին հասնելու համար միմյանց համոզելով կամ բանակցելով:

Խաղերի ընթացքում նվազում է սովորողի անհանգստությունը և խոսքն առավել սահուն է դառնում, ձեռք է բերվում հաղորդակցական ունակություններ: Խաղային գործողությունները սովորողների մոտ խոսելու հմտություններ զարգացնելու հիմնալի դրդապատճառ են: Խաղերը մրցակցություն են մտցնում լեզվի կիրառման համատեքստում:

Մրցակցային խաղերի ստեղծած մթնոլորտը նաև ստիպում է սովորողներին կենտրոնանալ և ինտենսիվորեն մտածել ուսումնական գործընթացի ողջ ընթացքում: Զանի որ լեզուների ուսուցումը պետք է հաճելի լինի, ուստի խաղերն օգնում են դա անել: Սովորողը խաղի ընթացքում ենթագիտակցորեն մեծ քանակությամբ լեզվական գիտելիքներ է ձեռք բերում կենտրոնանալով և ակտիվորեն լսելով: Ի դեպ մենք մեր մայրենի լեզվի իմացության մեծ մասը ևս ձեռք ենք բերում խաղի ընթացքում լեզուն կիրառելու միջոցով<sup>4</sup>:

Ըստ Ցեզար Կյորի (1998) խաղերն ունեն բազմաթիվ բնութագրեր.

1. Խաղը կառավարվում է կանոններով: Պարզ գործողությունը խաղի կանոնների վերածելը կարևոր է:
2. Խաղն ունի նպատակներ: Կանոններից մեկը նպատակին հասնելն է: Այս նպատակները կարող են լինել մի բան, ինչպիսին է առաջինը ավարտելու միավորների ճիշտությունը:
3. Խաղը փակ գործողություն է: Դա նշանակում է, որ խաղերը պետք է ունենան սկիզբ և ավարտ: Խաղացողի և ուսուցչի համար պետք է հեշտ լինի իմանալ, թե ով է պատրաստվում հասնել նպատակին: Դասարանում խաղեր

<sup>4</sup> Ляховицкий М.В., Общая методика обучения иностранным языкам. Москва, 1991:

օգտագործելը շատ առավելություններ ունի: «Խաղերը նախընտրելի են լեզվի դասերի սովորական ձևից, դրանք խթանող և մարտահրավերային են, տալիս են հնարավորություն լեզվի կիրառման տարբեր հմտություններում՝ խոսելու, գրելու, լսելու և կարդալու. . . Նրանք ստեղծում են բովանդակային ենթատեքստ լեզվի օգտագործման համար: Վերոնշյալ սահմանումից կարելի է ասել, որ խաղերը խրախուսում են, զվարճացնում, սովորեցնում և խթանում լեզվի սահունությանը: Դրանք պետք է օգտագործվեն լեզվի ուսուցման ընթացքում, քանի որ օգնում են սովորողներին տեսնելու օտար լեզվի գեղեցիկ կողմերը, և ոչ միայն օտար լեզվի բուն խնդիրները:

Ձիւլ Յեդֆիլդը նշում է, որ խաղերն օգտագործում են տեխնիկաների բազմազանություն: Դե իսկ այդ բազմազանությունը կարևոր է լեզվի ուսուցման, դասավանդման և նաև խաղերի հաջող ընթացքի գործում: Այդպիսի տեխնիկաներից են օրինակ՝ լրացնել տեղեկությունը բաց թողնված տեղում, տեղեկության հավաքագրումը, համակցումը, դերախաղը և ձևախաղը: Այսպիսով, խաղերի ընթացքում կիրառվում են բազմաթիվ տեխնիկաներ, իսկ օտար լեզվի ուսուցման մեջ խաղերի կիրառման կարևոր պատճառն այն է, որ դրանք չափազանց հաճելի են և՛ ուսուցչի, և՛ սովորողների համար:

Ներկայացնենք դասի պլան նմուշ օրինակ, որը կիրառելով դասաժամերի ընթացքում թույլ կտա զարգացնել երեխաների բանավոր հաղորդակցության կարողությունները:

### ***Առարկա - Անգլերեն***

#### ***Դասարան - 9-րդ***

#### ***Դասի թեման՝***

This is Canada.

Famous Canadians.

Famous Armenians in Canada.

**Դիդակտիկ նյութեր՝** Սահիկահանդես, պատատաներ, թղթեր, գրատախտակ, լրզո, տեսանյութ, պրոյեկտոր

#### ***Մեթոդներ՝*** Զամագործակցային աշխատանք՝

- Զետագրտական՝ ճանապարհորդություն (Travelling) դեպի Կանադա
- Զարց/ պատասխան
- Ցուցադրում, դիտում

#### ***Դասի նպատակը՝***

Կարողություններ և հմտություններ.

ա)Չաղորդակցական կարողությունների և հմտությունների համակարգում Աշակերտները պետք է կարողանան՝

1. Կառուցել բանավոր խոսք թեմայի շրջանակներում ներկայացնելով Սահիկահանդեսը պատշաճ կերպով
2. Մտահորիզոնի ընդլայնում՝ գիտելիքների հիման վրա (աշխարհագրական մի շարք անուններ, տեղանուններ...)
3. Լսել դիմացինին, հասկանալ և կարողանալ շարունակել նրա միտքը
4. Կիսել թեմայի շուրջ ձեռքբերած փորձն ու գիտելիքները համադասարանցիների հետ:

բ)Չամագործակցային կարողությունների և հմտությունների համակարգում Աշակերտները պետք է կարողանան ապահովել՝

1. Խմբային գործընթացի մշակումը
2. Ընկերների և ուսուցչի խոսքը լսելու և հարգելու ունակությունը
3. Ապահովել դրական փոխկապվածություն

**Դասի ընթացքը** Կազմակերպչական մաս: Թեմայի հիշեցում: Դասի նպատակների ներկայացում:(1ր.)

Դասի սկզբում ներկայացվում է երկխոսություն թեմայի շուրջ (1 ր.), որին հաջորդում է հետևյալը՝

Աշակերտները խումբ-խումբ ներկայացնում են սահիկահանդեսը ստորև նշված հաջորդականությամբ՝

1. Canada(4-5ր.)
2. The capital city Ottawa and other cities(6-7ր.)
3. Some Interesting Facts About Canada/Famous Canadians(7-8ր.)
4. Famous Armenians in Canada(10-12ր.)= (30 ր.)

Յուրաքանչյուր թեման ներկայացնելուց հետո տրվում են ամրապնդող հարցեր թեմայի վերաբերյալ (4ր.)

Կատարվում է անդրադարձ: Ի՞նչ սովորեցինք, ի՞նչն էր կարևոր և ի՞նչ օգուտ քաղեցինք: (23ր.) Ի՞նչ նշանակություն ունեցավ այս դասը մեզ համար:

Չանձնարարել գրել շարադրություն հետևյալ թեմայի շուրջ՝

Write a composition - “Why to visit Canada”.

**ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Այսպիսով նշենք, որ օտար լեզվի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցության հմտությունների ձևավորումն է, իսկ մնացած բոլոր խնդիրները (կրթական, դաստիարակչական, զարգացնող) լուծվում են գլխավոր նպատակի իրականացման ճանապարհին:

Ուսուցչի խնդիրն է՝ յուրաքանչյուր աշակերտի համար ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որ յուրաքանչյուրին հնարավորություն կտա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք:

Նոր մոտեցումները օտար լեզվի դասավանդման պրոցեսում, ինչպիսիք են ակտիվ ուսուցումը, ինտերակտիվ մեթոդները, նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործումը, համացանցը, օգնում են իրականացնել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցում, ապահովում են անհատական ուսուցում՝ ելնելով սովորողի հնարավորություններից, մակարդակից, հակումներից:

Առաջնային նշանակությունը տրվում է նյութն ընկալելուն, բովանդակության փոխանցմանը և իմաստի արտահայտմանը, որն էլ տանում է լեզվի քերականական կառույցների և բառերի անուղղակի ուսուցմանը:

Մեծ տեղ է հատկացվում ակտիվ հաղորդակցական կարողությունների զարգացմանն ու կիրառմանը:

Այն իրականացվում է մենախոսությամբ, երկխոսությամբ, հարցազրույցի, դերախաղի, մտքերի փոխանակմամբ, շարադրանքի ներկայացմամբ, տեղեկատվության փոխանցմամբ, համագործակցային առաջադրանքներով և քննարկումներով:

Այս բոլորը իրականացվում է անհատական, զրույցներով, խմբերով: Աշակերտակենտրոն միջավայրում համագործակցող աշակերտները ձեռք են բերում ճանաչողական ակտիվություն: Օտար լեզվի ուսուցիչը պետք է լինի մեթոդապես գրագետ, ժամանակակից տեխնոլոգիաները ազատորեն տիրապետող և կիրառող:

Ամենից հաճախ, ավանդական դասարաններում աշակերտները սուկ պասիվ կերպով են ներգրավված ուսումնառության գործում, այսինքն՝ լսում են դասավանդողին, դիտում երբեմն-երբեմն ցուցադրվող սլայդը, կամ (պահանջված դեպքում) ընթերցում դասագիրքը:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ նման պասիվ ներգրավվածությունը սովորաբար հանգեցնում է աշակերտների կողմից գիտելիքների սահմանափակ մտապահման:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Полат Е.С., Метод проектов на уроках иностранного языка // Иностр. языки в школе, 2000, № 2:
2. Ляховицкий М.В., Общая методика обучения иностранным языкам. Москва, 1991:
3. Hatch E., Discourse and language education. Cambridge: Cambridge University Press, 1992:
4. Dorsch M. Second Language Acquisition vs. Second Language Learning, Grin Verlag, 2011:
5. Nagaraj G. English Language Teaching: Approaches, Methods, Techniques. India: Orient Blackswan, 1996: